

Թ. Բաբայան. «Վերականգնվող էներգետիկան Հայաստանի համար հեքիաթ չէ»

13:26, 28 Հունիս, 2011

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամն այսօր ներկայացրեց վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) ոլորտում իրականացրած ուսումնասիրությունների հավաքածուն, որի շրջանակներում տեղի ունեցավ քննարկում հիմնադրամի կատարած աշխատանքների եւ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:

Հրատարակված հավաքածուն ներառում է վերականգնվող էներգետիկայի ուղեցուցային ծրագիրը, փոքր հիդրոկայանների զարգացման սխեման, ինչպես նաեւ արեւային ֆոտովոլտայիկ տեխնոլոգիաների հեռանկարներին, կենսավառելիքի արտադրության հնարավորություններին նվիրված ուսումնասիրություններ:

«Մենք ուզում ենք ցույց տալ, որ սա մեր հանրապետության համար հեքիաթ չէ», - ասաց հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը:

Միջոցառումը նպատակաուղղված է մեծացնելու մասնավոր սեփականություն հանդիսացող եւ մասնավոր հիմունքներով օգտագործվող վերականգնվող էներգիայի արտադրության դերը, դյուրացնելու ՎԷ ոլորտում ներդրումների ներգրավումը եւ հայտնաբերելու ոլորտի պոտենցիալ ներդրողներին: Միջոցառման ընթացքում ներկայացվեցին «Վերականգնվող էներգետիկայի ծրագրի» (ՎԷԾ) շրջանակներում ստացված արդյունքներն ու ձեռքբերումները Հայաստանի եւ արտերկրի ներդրողների եւ հասարակության լայն շրջանակի համար:

«Ո՞վ կարող է ասել՝ որքա՞ն ջերմային էներգիա է պետք հանրապետությանը. չկա այդպիսի վիճակագրություն», - լրագրողների հետ ձեպագրույցում փաստեց հիմնադրամի տնօրենը՝ հայտնելով, որ այդուհանդերձ իրենց սահմանած բարձրագույն շեմը, որին նախատեսել են հասնել 2020 թվականին, Հայաստանի տեխնիկական պոտենցիալից շատ ցածր է եւ միանգամայն իրացվելի: «Սա գուշակություն չէ, մենք չենք ուզում լավատեսական գեղեցիկ ու պայծառ պատկեր կերտել ապագայի համար, այլ իրատես ենք եւ իրատեսության սահմաններում ենք աշխատում», - նշեց նա:

Հիմնադրամը մշակել է ֆինանսավորման երկու մեխանիզմ՝ էներգախնայողության-ջեռուցման եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի համար: ՎԷ-ի ֆինանսավորման փաթեթը կազմված է ֆինանսական երեք աղբյուրներից՝ հիմնադրամ (5 մլն ԱՄՆ դոլար), ՎԶԵԲ (7 մլն ԱՄՆ դոլար) եւ «Կասկադ կրեդիտ հոլդինգ» (3 մլն ԱՄՆ դոլար): Վերջինիս իրավահաջորդն է «Ամերիաբանկ»-ը, որը պատասխանատու է ֆինանսական ողջ փաթեթի համար:

Ծրագրի համակարգողները ներկայացրին, որ 2007-2010 թթ-ին, ինչը կատարված աշխատանքների համար բավական կարճ ժամանակահատված է, ֆինանսական այդ մեխանիզմի միջոցով կառուցվել են 26 փոքր ՀԷԿ-եր, որոնցից 24-ն արդեն շահագործվում են:

Հիմնադրամի փորձագետներն իրականացրել են տեղանքի բնապահպանական եւ տեխնիկական մոնիթորինգ, կազմակերպել վարկային միջոցներով իրականացված աշխատանքների եւ ապրանքների գնումներ: